# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **գրավոր թարգմանության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՉՀ-ՄԱԾՁԲ-2026/2»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2025 թվականի հոկտեմբերի 29-ին** կնքված **N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2026/2»** պայմանագրում **2026 թվականի հունվարի 26-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ:** Պայմանագրով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

**Փոփոխության նկարագրություն:** Ծառայությունների մատուցումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

**Փոփոխության հիմնավորում:** Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, **29.10.2025թ. կնքված N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2026/2»** գնման պայմանագրի 7.5-րդ և 7.14-րդ կետեր, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**